Դիմում

Սույնով խնդրում եմ ինձ հնարավորություն տալ ԱՐԱՐԱՏՄՈԲԱՅԼ Բանկինգ և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ /այսուհետ՝ Բանկ/ կողմից առաջարկվող այլ գործիքների և համակարգերի (այսուհետ՝ Հեռակառավարման համակարգ կամ Համակարգ) միջոցով էլեկտրոնային կապի, հեռախոսակապի օգտագործմամբ կամ այլ կերպ օգտվել Բանկի կողմից Հեռակառավարման համակարգերի միջոցով առաջարկվող բանկային հաշիվների, ավանդների, վարկերի, քարտերի և այլ ծառայություններից:

Ընդունում եմ, որ.

1) Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է իմ անձի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Հեռակառավարման համակարգերի միջոցով ինձ բանկային ծառայություններ մատուցելու համար:

2) Համակարգ մուտք գործելու համար իմ կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Իմ կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված իմ կողմից: Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

3) Համակարգից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թոքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում պարտավոր եմ անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել ինձ տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:

4) Համակարգն օգտագործելու եմ իմ ռիսկով և ԲԱՆԿԸ պատասխանատվություն չի կրում Համակարգի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգի օգտագործումից բխող իմ տվյալների բացահայտման և իմ ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

5) Համակարգը տրամադրվում է դրա հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն է տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Տեղյակ եմ, որ կախված վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Ինձ առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված իմ համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը' տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով: